6. Կանոնավոր քառանկյուն բուրգի բարձրությունը հավասար է 7 սմ, իսկ հիմքի կողմը՝ 8 սմ: Ի՞նչ անկյան տակ է թեքված կողմային կողը դեպի հիմքի հարթությունը:

7. Կանոնավոր քառանկյան բուրգի ձև անցնող վրանը կազմված է 4 ձողերից, վորոնք ձգում են բրեզենտը (գծ. 19): Վրանի SO բարձրությունը հավասար է 2,4 մ-ի: Յերկու հարևան ձողերի հիմքերի հեռավորությունը՝ $AB=2$ մ: Վորոշեցե՛ք վրանի գագաթի և հիմքի կողմի միջնակետի SM հեռավորությունը, այսինքն բուրգի ապոթեմը, և այդ գծի թեքության անկյունը դեպի հորիզոնական հարթությունը:

8. ABC կանոնավոր յեռանկյան կողմը հավասար է a -ի: Այդ յեռանկյան O կենտրոնից կանգնեցրած է ուղղահայաց, վերջինի վրա վերցված է M կետն այնպես, վոր $MA=a$: Այնուհետև M կետից անց է կացված $MD \perp AC$: Վորոշեցե՛ք MD գծի և ABC յեռանկյան հարթության միջև կազմված φ անկյունը:

9. Ուղիղը հարթության հետ կազմում է α անկյունը: Տված հարթության մեջ այդ անկյան գագաթից անց է կացրած մի ուղիղ, վորը առաջին ուղիղի պրոեկցիայի (այդ հարթության վրա) հետ կազմում է β անկյունը: Վորոշեցե՛ք այդ ուղիղներով կազմված անկյունը ($\alpha=43^\circ 53'$; $\beta=11^\circ 10'$):

10. Հարթության մեջ չգտնվող ուղիղը, հատվելով հարթության վրա գտնվող ուղիղի հետ, կազմում է այդ ուղիղի հետ α անկյունը, իսկ վերջինը կազմում է առաջին ուղիղի պրոեկցիայի (տված հարթության վրա) հետ β անկյունը: Վորոշեցե՛ք առաջին ուղիղի կազմած անկյունը հարթության հետ ($\alpha=8^\circ 26'$; $\beta=5^\circ 40'$):



Գծ. 20

11. a , b և c կողմերն ունեցող յեռանկյան արտագծած շրջանագծի կենտրոնից կանգնեցրած է այդ յեռանկյան հարթությանը h ուղղահայացը: Վորոշեցե՛ք այն անկյունները, վոր կազմում են ուղղահայացի գագաթը յեռանկյան գագաթների հետ միացնող գծերն այդ հարթության հետ ($h=60$; $a=30$; $b=5$; $c=29$):


12. Հորիզոնական հարթության միջով անցնում է ուղղագիծ ճանապարհի a մետր յերկարություն ունեցող BC հատվածը: Ժանապարհի մոտ գտնվում է մի սար, վորի գագաթը C կետից յերեւում է φ անկյան տակ (գծ. 20): S գագաթը, պրոեկտվում է ճանապարհի հարթության A կետում: BC հատվածն իր ծայրերից դեպի A կետը ուղղված ճառագայթների հետ կազմում է $\angle ACB=\gamma$ և $\angle ABC=\beta$: Վորոշեցե՛ք սարի բարձրությունը ($a=400$; $\beta=40^\circ 10'$; $\gamma=60^\circ 40'$; $\varphi=50^\circ 50'$):

13. Կանոնավոր յեռանկյան բուրգի մեջ հիմքի կողմը հավասար է a -ի, իսկ կողմային կողը հիմքի հարթության հետ կազմում է α անկյունը (գծ. 21): Վորոշեցե՛ք հիմքի կողմով և կողմային կողի միջնակետով անցկացրած հատվածի մակերեսը:

14. $AB=a=13$ սմ հատվածի ծայրերը գտնվում են հարթությունից $m=5$ սմ և $n=8$ սմ հեռավորության վրա: Վորոշեցեք հատվածի և հարթության միջև կազմված անկյունը (յերկու դեպք):

15. Հարթության յերկու կետերից տարված են այդ հարթությանը յերկու թեքեր (AM և BN), վորոնք իրար զուգահեռ են և հարթության հետ կազմում են α և β անկյունը (զծ. 22): Այդ ուղիղներին ուղղահայաց հատող MN ուղիղը հարթության հետ կազմում է β անկյունը: Վորոշեցեք թեքերի և նրանց հիմքերը միացնող AB ուղիղի միջև կազմված փ անկյունը:

16. Հարթության յերկու կետերից, վորոնց հեռավորությունը հավասար է a -ի, անց են կացրած յերկու զուգահեռ թեքեր, վորոնք հարթության հետ կազմում են փ անկյունը: Վորոշեցեք այդ թեքերի հեռավորությունը, յեթե տվյալ հարթության վրա վերցրած նրանց պրոեկցիաների հեռավորությունը հավասար է b -ի:




Գծ. 21.

17. AB հատվածը զուգահեռ է հարթությանը: Այդ հատվածի ծայրերից հարթությանը տարված են յերկու թեքեր, այն է՝ $AC=c$ և $BD=d$: AC թեքը հարթության հետ կազմում է α անկյուն: Վորոշեցեք BD թեքի կազմած անկյունը հարթության հետ ($c\sqrt{6}$; $d=3$; $\alpha=60^\circ$):

18. Հարթությանը զուգահեռ հատվածի ծայրերից տարված են այդ հատվածին ուղղահայացներ այնպես, վոր նրանց հարթության հետ կազմում են α և β անկյուններ ($\alpha > \beta$): Հատվածի յերկարությունը հավասար է a -ի: Ուղղահայացների և հարթության հատման կետերի հեռավորությունը հավասար է b -ի: Վորոշեցեք հարթության հեռավորությունը հատվածից (յերկու դեպք):

19. Ջուգահեռ հարթությունների միջև գտնվող յերկու գծերի հաավանները հարաբերում են այնպես, ինչպես 2:3, իսկ դրանց հարթության հետ կազմած անկյունները՝ 2:1: Վորոշեցեք այդ անկյունները:




Գծ. 22.

§ 17. ՅԵՐԿՆԻՍՏ ՅԵՎ ԲԱԶՄԱՆԻՍ ԱՆԿՑՈՒՆԵՐ


1. Տված է α յերկնիստ անկյունը: Այդ անկյան նիստերից մեկի վրա կոդից a հեռավորություն ունեցող կետից կանգնեցրած է ուղղահայաց մինչև մյուս նիստի հետ հատվելը: Վորոշեցեք այդ ուղղահայացի յերկարությունը ($a=6,06$; $\alpha=41^\circ 55'$):

2. 1) ABC ուղղանկյուն յեռանկյան AB ներքնածիգը գտնվում է P հարթության մեջ, իսկ եջերը P հարթության հետ կազմում են α և β անկյունները (զծ. 23): Վորոշեցեք յեռանկյան հարթության և P հարթության միջև կազմված փ անկյունը:

2) ABC յեռանկյան մի կողմը (AB) գտնվում է P հարթության մեջ: Մյուս յերկու կողմերը (CA և CB), P հարթության հետ կազմում են α և β անկյունները: Հայտնի յե վոր $\operatorname{tg} \alpha = \frac{1}{3}$ և $\operatorname{tg} \beta = \frac{1}{4}$, CA և CB կողմերի պրոեկցիաները հարթության վրա փոխադրահայաց են: Վորոշեցեք ABC յեռանկյան թեքությունը դեպի P հարթությունը:



Գծ. 23.




Գծ. 24.

3. 20° թեքություն ունեցող կտուրի վրա անց են կացրած MN գիծը (զծ. 24), վորը ամենամեծ վայրեջքի գծի հետ կազմում է 25° անկյուն (վորպես ամենամեծ վայրեջքի գիծ ծառայում է հարթության վրա անցկացրած հորիզոնական գծի ուղղահայացը): Վորոշեցեք MN - ուղիղի կազմած անկյունը հորիզոնի հետ:

4. Մարի 32° թեքություն ունեցող լանջի վրայով անցնում է մի ճանապարհ, վորն ամենամեծ վայրեջքի հետ կազմում է 45° անկյուն (տես. 3-րդ խնդիրը): Գտեք ճանապարհի թեքությունը:

5. M հարթության A կետից անց են կացրած AD թեքը, վորը հարթության հետ կազմում է α անկյունը (զծ. 25): AD ուղիղով անց են կացրած M հարթության հետ $DBC=\beta$ անկյուն կազմող P հարթությունը: Վորոշեցեք AD գծի և M և P հարթությունների հատման գծի միջև կազմված անկյունը:



Գծ. 25.

6. Կանոնավոր n -անկյուն բուրգի բարձրությունը յերկու անգամ փոքր է հիմքի կողմից: Վորոշեցեք հիմքի յերկնիստ անկյունը (φ):

7. 26° -ը գծագրի վրա արված է լողացող պոնտոնային կետակի ուղղված (պոնտոնը յերկաթե հարթահատակ նավակ է), վորը յարեկաված է ուղղագիծ և հորիզոնական հարթությունների վրա: Չափերը արտահայտված են մետրերով: Վորոշեցեք՝


ա) շեղիկի (укосина) յերկարությունը (a) և հենարանի յերկարությունը (b):

բ) շեղիկների և հենարանների թեքության անկյունները դեպի պոնտոնի մակերևույթը:


գ) շեղիկների միջև կազմված անկյունը և հենարանների միջև կազմված անկյունը:

գ) շեղվորեն չհարթության և պոնտոնի հարթության միջև կազմված անկյունը. հենարանների հարթության և պոնտոնի հարթության միջև կազմված անկյունը:

8. Քառակուսաձև շինություն ծածքը տրված է հատակագծի վրա (գծ. 27) չափերը տրված են մետրներով: Ծածքի վերին մակերևույթի բարձրությունը տանիքի հիմքից հաճախ է շինքի լայնության $\frac{1}{3}$



Գծ. 26.



Գծ. 27.

մասին: Բոլոր չորս նիստերն էլ միևնույն թեքություն ունեն դեպի հորիզոնական հարթությունը: Վորոշեցեք ծածքի թեքության անկյունը:

9. Ուղղանկյան լեռանկյան մեջ տված են 2 ներքնաձիգը և 2 սուր անկյունը: Վորոշեցեք ուղիղ անկյան գագաթի հեռավորությունն այն հարթությունից, վորն անցնում է ներքնաձիգով և լեռանկյան հարթության հետ կազմում φ անկյուն:

10. Բուրգի հիմքը կանոնավոր լեռանկյուն է: Նիստերից մեկն ուղղահայաց է հիմքին, իսկ մյուս չորսը թեքված են դեպի հիմքը α անկյան տակ: Ի՞նչ թեքություն ունին կողմնային կողերը դեպի հիմքի հարթությունը:

11. AB ուղիղը ուղղահայաց է P հարթությանը: CD ուղիղը AB-ին հատում է α անկյան տակ և P հարթության հետ կազմում φ անկյունը:


Վորոշեցեք P հարթության և AB ու CD ուղիղներով անցնող հարթության միջև կազմված անկյունը:

12. Ուղղանկյուն չորսույթի մի գագաթից դուրս չեկող կողերի ծայրերը միացված են աղեղներով: Չորսույթի նիստերի վրա առաջացած լեռանկյունների մակերեսները հավասար են: 4 դմ²; 6 դմ²; 12 դմ²: Վորոշեցեք չորսույթի հատվածքի և փոքր հիմքի միջև կազմված անկյունը:


13. Կանոնավոր քառանկյուն բուրգի մեջ հիմքի կողմն ու կողմնային կողը հարաբերում են այնպես, ինչպես $\sqrt{3}:\sqrt{2}$: Հիմքի անկյունագծով անց ե կացրած կողմնային կողին զուգահեռ հարթություն: Վորոշեցեք այդ հարթության թեքվածությունը դեպի հիմքը:

14. Զուգահեռակողմն ու P հարթությունը գտնվում են այնպես, վոր զուգահեռակողմի փոքր կողմերից մեկը գտնվում է P հարթության վրա, իսկ այդ կողմին հակադիր կողմի հեռավորությունը հարթությունից հավասար է զուգահեռակողմի մեծ կողմերի հեռավորությանը: Վորոշեցեք P հարթության և զուգահեռագծի հարթության միջև կազմված անկյունը, չեթե զուգահեռագծի կողմերը հարաբերում են այնպես, ինչպես 3:5:

12. Կանոնավոր n-անկյուն բուրգի գագաթի հարթ անկյունը հավասար է α -ի: Վորոշեցեք այդ բուրգի չորս նիստի անկյունները (հիմքի մոտ գտնվող և կողմնային նիստերով կազմված):



Գծ.



Գծ. 29.

16. Վորոշեցեք

- 1) կանոնավոր աեռաեդրի,
- 2) » ոկտաեդրի,
- 3) » իկոսաեդրի (գծ. 28) և
- 4) » դոդեկաեդրի (գծ. 29)

չեղևու հարևան նիստերով կազմված անկյունը:

§ 18. Ձեւերի ՊՐՈՆԵՑԻԱՆԵՐԻ (ՀԱՐԹՈՒԹՅԱՆ ՎՐԱ) ՄԱԿԵՐԵՍՆԵՐԸ

1. Զուգահեռակողմի մակերեսը $Q=50$ մմ²: Այդ զուգահեռակողմի հարթությունը պրոնեցիաների P հարթության հետ կազմում է 30° անկյուն: Զուգահեռակողմի մի կողմը գտնվում է P հարթության վրա: Վորոշեցեք զուգահեռակողմի պրոնեցիայի մակերեսը:

2. Ուղիղ լեռանկյուն պրիզմայի հիմքի կողմերից մեկով անց ե կացրած մի հարթություն, վորը հատում է հանդիպակաց կողմնային կողը և թեքված է հիմքի հարթությունից 45° -ով: Վորոշեցեք հատվածքի մակերեսը, չեթե հիմքի մակերեսը հավասար է Q-ի:

3. Կանոնավոր լեռանկյուն պրիզմայի հիմքի կողմով անց ե կացրած մի հատող հարթություն, վորը թեքված է դեպի հիմքը α անկյան տակ: Հիմքի կողմը հավասար է a-ի: Վորոշեցեք հատվածքի մակերեսը:

4. Տանիքի վրա ձխնելույթի համար բաց թողած անցքի մակերեսը հավասար է 2100 մմ²: Տանիքի թեքության անկյունը հավասար է 32° -ի: Խողովակը ունի քառակուսի պրիզմայի ձև: Գտեք պրիզմայի հիմքի կողմը:

5. Խողովակի չափերն են՝ 40 մմ $\times$ 40 մմ: Տանիքի թեքության անկյունն է 35° : Վորոշեցեք տանիքի անցքի մակերեսը:


6. Քառաթեք տանիքը ծածկվում է 28 մ² մակերես: Տանիքի բոլոր կողմերն ունեն $32^\circ 53'$ թեքություն: Գտեք տանիքի մակերեսը:

7. Քառաթեք տանիքի կողմային թեքվածքը մի հավասարասրուն սեղան է, վորի զուգահեռ կողմերը հավասար են 10 մ և 6 մ, իսկ բարձրությունը՝ 5 մ:

Թեքվածքի պրոնեցիան տանիքի հարթության վրա հավասար է 32° մ: Գտնել թեքվածքի թեքության անկյունը և պիպե (конь) բարձրությունը տանիքից:

8. 30° -րդ գծալրի վրա նկարված են միտքեք և քառաթեք տանիքների:

տրվագծեր, վորոնք ունեն ուղղանկյան ձև (ա և b կողմերով): Յերկու տանիքներն ել թեքված են դեպի հորիզոնը α անկյան տակ: Այդ տանիքներից վորը ներկելու համար ավելի շատ ներկ կախանջվի:



Պձ. 30.

Այդ մակերեսը նախորդից մեծ, թե փոքր կլինի: Ավելի պայծառ լուսավորված կլինի, թե խավար:

10. Խոնչ մեծության հորիզոնական մակերես կարելի չի ծածկել 120 մ² տանիքով, յեթե վերջինի թեքությունը հավասար է 27°30':

§ 19. ԶՈՒԴԱՀԵՌԱՆԻՍՏՆԵՐ, ՊՐԵԶՄԱՆԵՐ, ԲՈՒԴԻՅԵՐ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ


Զուգահեռագծերի
յեւ պրիզմաներ

1. Ուղղանկյուն զուգահեռանիստի անկյունագծի և կողերի միջև կազմված անկյունները հավասար են α , β և γ :


1) Ապացուցեք, վոր $\cos^2 \alpha + \cos^2 \beta + \cos^2 \gamma = 1$:

2) Հաշվեցեք γ -ն, յեթե $\alpha = 31^\circ 10'$ և $\beta = 69^\circ 10'$:

2. Պահանջվում է կանոնավոր քառանկյուն պրիզման հատել այնպես, վոր հատվածքում ստացվի α սուր անկյունն ունեցող մի ումբ: Վորոշեցեք հատող հարթության դիրքը:



Պձ. 31.



Պձ. 32

3. Կանոնավոր քառանկյուն պրիզմայի մեջ (զձ. 31) հիմքի յերկու հարևան կողմերի միջնակետով անց ե կացված մի հարթություն, վորը հատում է կողմային յերեք կողերը և թեքված է դեպի հիմքի հարթությունը

α անկյան տակ: Հիմքի կողմը հավասար է a -ի: Վորոշեցեք ստացված հատվածքի մակերեսը:

4. Կանոնավոր քառանկյուն պրիզմայի մեջ, հիմքի յերկու հարևան կողմերով ու պրիզմայի առանցքով անց ե կացրած հարթություն: Գտնենալով, վոր հիմքի կողմը հավասար է a -ի, իսկ կողմային կողը b -ի, վորոշեցեք՝ 1) ստացված հատվածի մակերեսը և 2) անցկացրած հարթության ու հիմքի հարթության միջև կազմված անկյունը:

5. Ուղիղ զուգահեռանիստի հիմքը α սուր անկյունն ունեցող ումբ է: Խոնչպես պետք է հատել այդ զուգահեռանիստը, վորպեսզի հատվածքը լինի մի քառակուսի, վորի գագաթները գտնվում են կողմային կողերի վրա:

6. Ուղղանկյուն զուգահեռանիստի մեջ d անկյունը հիմքի հետ կազմում է β անկյուն: Հիմքի անկյունագծերը կողմի հետ կազմում է α անկյունը: Վորոշեցեք զուգահեռանիստի կողմային մակերեսութի (ա=21°35'; $\beta=54^\circ 24'$; $d=17^\circ 89'$):

7. Ուղիղ զուգահեռանիստի հիմքը ումբ է: Ռոմբի փոքր անկյունագծից հավասար է d -ի, իսկ սուր անկյունը α -ի: Զուգահեռանիստի բարձրությունը հավասար է $\frac{d}{2}$ -ի: Գտեք այդ զուգահեռանիստի լրիվ մակերեսութի (d=25,87 մ; $\alpha=75^\circ 20'$):

8. Կանոնավոր հնգանկյուն պրիզմայի հիմքի կողմը հավասար է a -ի: Այդ պրիզմայի բարձրությունը հավասար է $\frac{1}{4}a$, վորտեղ d -ն հիմքի անկյունագծին է: Հաշվեցեք պրիզմայի լրիվ մակերեսութի (a=23,79 մ):

9. Ուղիղ պրիզմայի հիմքը հավասարասրուն յեռանկյուն է, վորի մեջ a հավասար կողմերով կազմված անկյունը հավասար է α -ի: Վերին հիմքի գագաթից անց են կացրած յերկու հավասար կողմային նիստերի անկյունագծերը: Այդ անկյունագծերով կազմված անկյունը հավասար է β -ի: Գտեք պրիզմայի կողմային մակերեսութի (a=37,84 սմ; $\alpha=63^\circ 28'$ և $\beta=39^\circ 36'$):

10. Յեռանկյուն պրիզմայի մեջ հիմքի յուրաքանչյուր կողմը հավասար է a -ի: Հիմքի գագաթներից մեկի պրոեկցիան մյուս հիմքի կենտրոնն է: Կողմային կողերը թեքված են դեպի հիմքի հարթությունը α անկյան տակ: Վորոշեցեք պրիզմայի կողմային մակերեսութի:


11. Բուրգի մեջ, վորի հիմքը կանոնավոր յեռանկյուն է, կողմային նիստերից մեկը ուղղահայաց է հիմքին, իսկ մյուս յերկուսը նրա հետ կազմում են φ անկյունը: Վորոշեցեք կողմային կողերի կազմած անկյունները հիմքի հարթության հետ ($\varphi=30^\circ$):

12. Կանոնավոր n -անկյուն բուրգի մեջ գագաթի հարթ անկյունը հավասար է α -ի: Վորոշեցեք հիմքի յերեքնիստ անկյունները ($n=4$; $\alpha=60^\circ$):

13. Կանոնավոր քառանկյուն բուրգի մեջ հիմքի կողմը հավասար է a -ի, իսկ կողմային կողը հիմքի հարթության հետ կազմում է α անկյունը: Այդ բուրգին ներգծած է խորանարդ այնպես, վոր նրա գագաթներից չորսը գտնվում են բուրգի ապոթեմների վրա: Վորոշեցեք խորանարդի կողը:

14. Կանոնավոր յեռանկյուն բուրգի մեջ հիմքի կողմը հավասար է a -ի և կողմային կողի հետ կազմում է α անկյունը: Վորոշեցեք բուրգի կողմային կողով ու բարձրությունով անցկացրած հատվածքի մակերեսը: Խոնչու համար α անկյունը պետք է ավելի լինի 30° -ից:

15. Կանոնավոր քառանկյուն բուրգի մեջ տրված են c ապոթեմը և անկյունագծային հատվածը P մակերեսը: Վորոշեցե՛ք կողմնային նիստի ու հիմքի միջև կազմված անկյունն ու հիմքի կողմը ($c=5$; $P=15$):



Դժ. 33.

16. Կանոնավոր քառանկյուն բուրգի մեջ բարձրությունը հարաբերում է հիմքի կողմին այնպես, ինչպես $m:n$: Հիմքի անկյունագծով անց ե կացված թե՛ք հարթություն այնպես, վոր ստացված հատվածը հավասար է անկյունագծային հատվածին: Վորոշեցե՛ք անցկացրած հարթության և բուրգի հիմքի միջև կազմված անկյունը:

$$\left(m:n=\frac{1}{\sqrt{6}}\right)$$

17. Կանոնավոր յեռանկյան բուրգի մեջ (գծ. 33) տրված են հիմքի a կողմը և հիմքի մոտ գտնվող α յերկնիստ անկյունը: Վորոշեցե՛ք $DEFK$ հատվածի մակերեսը, վորը անց է կացրած հիմքի կենտրոնով և զուգահեռ է բուրգի յերկու չհատվող SA և BC կողերին ($a=3$; $\alpha=70^\circ$):

18. Կանոնավոր քառանկյուն բուրգի մեջ հիմքի յերկնիստ անկյունը հավասար է α -ի: Այդ բուրգի կողով նրա ներսում տարված է մի հարթություն, վորը հիմքի հետ կազմում է β անկյունը: Հիմքի կողմը հավասար է a -ի: Վորոշեցե՛ք հատվածի մակերեսը:

Պրոեկցիայի մակերեսի քառակուսի կիրառմամբ բուրգի մակերեսի վրա զտնկյուն

19. Յեթե վորևէ բուրգի բոլոր կողմնային նիստերը միևնույն թեքությունն ունեն դեպի հիմքը, ապա՝

$$S_{\text{կողմ}} = \frac{Q}{\cos \alpha} \text{ և } S_{\text{լրիվ}} = \frac{2Q \cos \frac{\alpha}{2}}{\cos \alpha},$$

վորտեղ S -ը մակերեսություն է, Q -ն հիմքի մակերեսը, իսկ α -ն՝ կողմնային նիստերի թեքության անկյունը: Ապացուցե՛ք այդ:

20. (բանավոր): Բուրգի հիմքը ուղղանկյուն յեռանկյուն է: Այդ յեռանկյան հջերը հավասար են՝ 6 սմ և 8 սմ: Բուրգի կողմնային բոլոր նիստերը թեքված են դեպի հիմքը 60° անկյան տակ: Գտե՛ք $S_{\text{կողմ}}$ -ը:

21. 1) Կանոնավոր քառանկյուն բուրգի հիմքի կողմը հավասար է a -ի, իսկ հիմքին մոտ յերկնիստ անկյունը՝ 60° : Վորոշեցե՛ք այդ բուրգի կողմնային մակերեսությունը:

2) Կանոնավոր յեռանկյուն և կանոնավոր վեցանկյուն բուրգի հիմքի կողմը հավասար է a -ի, իսկ հիմքին մոտ յերկնիստ անկյունը՝ 30° : Վորոշեցե՛ք լրիվ մակերեսությունները:

22. Յեռանկյուն բուրգի հիմքի կողմերը հավասար են 13 սմ, 14 սմ և 15 սմ, իսկ հիմքի յերկնիստ անկյուններից յուրաքանչյուրը հավասար է 60° : Վորոշեցե՛ք բուրգի կողմնային մակերեսությունը:

23. Աշտարակը վերջանում է կանոնավոր ութանկյուն բուրգի ձև ունեցող տանիքով: Կողմնային նիստերը թեքված են դեպի հիմքը 60° անկյան տակ: Բուրգի հիմքի կողմը հավասար 1,23 մ: Քանի՞ քառակուսի մետր թիթեղ է հարկավոր այդ տանիքը ծածկելու համար:

24. Կանոնավոր բուրգի հիմքի մակերեսությունը հավասար է 168 սմ²: Կողմնային մակերեսությունը հավասար է 200 սմ²: Վորոշեցե՛ք կողմնային նիստի թեքության անկյունը դեպի հիմքը:

25. Կանոնավոր քառանկյուն բուրգի մեջ կողմնային նիստերը թեքված են դեպի հիմքը α անկյան տակ: Հիմքի կողմը հավասար է a -ի: Հաշվեցե՛ք $S_{\text{կողմ}}$ -ը:

26. Կանոնավոր քառանկյուն բուրգի բարձրությունը հավասար է h -ի: Հիմքի յերկնիստ անկյունը հավասար է α -ի: Վորոշեցե՛ք այդ բուրգի լրիվ մակերեսությունը:

27. Բուրգի հիմքը ուղեռ և: Այդ ուղեռի կողմը հավասար է a -ի, իսկ սուր անկյունը՝ α -ի: Բուրգի հիմքի յերկնիստ անկյունները հավասար են φ -ի: Գտե՛ք բուրգի լրիվ մակերեսությունը ($S_{\text{լրիվ}}$):

28. Կանոնավոր n -անկյան բուրգի ապոթեմը հավասար է k -ի և հիմքի հարթության հետ կազմում է α անկյունը: Գտե՛ք այդ բուրգի լրիվ մակերեսությունը ($S_{\text{լրիվ}}$):

29. Բուրգի հիմքը հավասարաբուն սեղան է, վորի զուգահեռ կողմերը հավասար են a և b , իսկ սուր անկյունը՝ φ : Բուրգի բոլոր կողմնային նիստերը թեքված են դեպի հիմքի հարթությունը α անկյան տակ: Գտե՛ք լրիվ մակերեսությունը ($S_{\text{լրիվ}}$):

30. Բուրգի հիմքը մի հավասարաբուն սեղան է, վորի անկյունագիծը հավասար է $\sqrt{3}$ -ի և մեծ հիմքի հետ կազմում է α անկյունը: Բուրգի բոլոր կողմնային նիստերը թեքված են դեպի հիմքը φ անկյան տակ: Վորոշեցե՛ք լրիվ մակերեսությունը ($S_{\text{լրիվ}}$):

31. Կանոնավոր յեռանկյուն բուրգի մեջ տրված են հիմքի կողմը (a) և դադաթի հարթ անկյունը (α): Պետք է վորոշել այդ բուրգի լրիվ մակերեսությունը:

32. Կանոնավոր n -անկյուն բուրգի մեջ հիմքի կողմը հավասար է a -ի, կողմնային կողը հիմքի հարթության հետ կազմում է α անկյունը: Վորոշեցե՛ք կողմնային մակերեսությունը:

33. Յեռանկյուն բուրգի դադաթի հարթ անկյունները հավասար են α , α և β -ի: Յերկու հավասար անկյունների ընդհանուր կողմը ծառայող կողմը ուղղահայաց է հիմքի հարթությանը և հավասար է a -ի: Վորոշեցե՛ք այդ բուրգի կողմնային մակերեսությունը:

34. Բուրգի հիմքը քառակուսի յե: Քառակուսու կողմը հավասար է a -ի: Կողմնային նիստերից յերկուսը ուղղահայաց են հիմքին, իսկ մյուս յերկուսը հիմքի հետ կազմում են α անկյուն: Վորոշեցե՛ք այդ բուրգի կողմնային և լրիվ մակերեսությունները ($S_{\text{կողմ}}$ և $S_{\text{լրիվ}}$):

35. Բուրգի հիմքը ուղղանկյուն է: Կողմնային նիստերից յերկուսը ուղղահայաց են հիմքին, իսկ մյուս յերկուսը հիմքի հետ կազմում են α և β անկյուններ: Բուրգի բարձրությունը հավասար է h -ի: Վորոշեցե՛ք այդ բուրգի կողմնային մակերեսությունը ($S_{\text{կողմ}}$):

36. Բուրգի հիմքը ուղեռ է: Բուրգի կողմը հավասար է a -ի, իսկ սուր անկյունը՝ α -ի: Կողմնային նիստերից յերկուսը (որինակ α անկյունը կազմող նիստերը) ուղղահայաց են հիմքին, իսկ մյուս յերկուսը թեքված են դեպի հիմքը φ անկյան տակ: Վորոշեցե՛ք այդ բուրգի կողմնային մակերեսությունը:

37. Կանոնավոր ռ-անկյուն հատած բուրգի մեջ տրված են՝ կողմնային կողմ (c) ու հիմքի կողմերը (a և b): Վորոշեցեք հատած բուրգի բարձրությունը:

38. Կանոնավոր քառանկյուն հատած բուրգի մեծ և փոքր հիմքերի կողմերը հարաբերում են այնպես, ինչպես $m:n$: Կողմնային կողմերը թեքված են դեպի մեծ հիմքի հարթությունը α անկյան տակ: Այդ բուրգի մեջ, մեծ հիմքի կողմով և փոքր հիմքի այդ կողմի դիմաց գտնվող կողմով անց ե կացրած հարթություն: Ի՞նչ անկյուն ե կազմում այդ հարթությունը բուրգի մեծ հիմքի հետ:

39. Կանոնավոր ռ-անկյուն հատած բուրգի մեջ տրված են h բարձրությունը և հիմքի a ու b կողմերը: Վորոշեցեք այդ հատած բուրգի լրիվ մակերևույթը:

40. Կանոնավոր ռ-անկյուն հատած բուրգի հիմքերի կողմերն են՝ a և b ($a > b$), կողմնային կողմ հիմքերի հարթությունների հետ կազմում ե α անկյունը: Վորոշեցեք այդ հատած բուրգի լրիվ մակերևույթը:


41. Կանոնավոր ռ-անկյուն հատած բուրգի մեջ հիմքերի մակերեսների հարաբերությունը հավասար ե m^2 , ապոթեմը՝ k , բարձրության և ապոթեմի միջև կազմված անկյունը՝ α : Վորոշեցեք այդ հատած բուրգի կողմնային մակերևույթը:

42. Կանոնավոր քառանկյուն հատած բուրգի մեջ տրված են բարձրությունը (h), և այն անկյունները (α և β), վոր կողմնային կողմ ու անկյունագիծը կազմում են հիմքերի հետ: Վորոշեցեք այդ հատած բուրգի կողմնային մակերևույթը ($h=25$; $\alpha=50^\circ 15'$; $\beta=35^\circ 40''$):

§ 20. ԳԼԱՆ, ԿՈՆ, ՀԱՏԱԾ ԿՈՆ ՅԵՎ ԴՐԱՆՑ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ

Դրան

1. Հավասարակողմ գլանի մեջ վերին հիմքի շրջանագծի մի վերև կետը միացրած ե վերին հիմքի շրջանագծի վորև կետին: Դեպի այդ կետերը տարած շառավղներով կազմված անկյունը հավասար ե 30° (ինկատի չե առնվում խաչվող ուղիներով կազմված անկյունը): Վորոշեցեք միացնող ուղիղի և գլանի առանցքի միջև կազմված անկյունը:



Գծ. 34.

4. Կանոնավոր յեռանկյուն բուրգի կողմնային կողմ հավասար ե b -ի և

2. Հավասարակողմ գլանի հիմքի շառավղը հավասար ե R -ի: Այդ գլանի մեջ վերին հիմքի շրջանագծի կետերից մեկը միացրած ե ներքին հիմքի շրջանագծի վորև կետին: Միացնող գիծը հիմքի հարթության հետ կազմվում ե α անկյունը: Վորոշեցեք այդ ուղիղի և գլանի առանցքի մեծնափոքր հեռավորությունը:

3. Դրանին տարված ե շոշափող ուղիղ, վորը հիմքի հարթության հետ կազմում ե α անկյունը: Վորոշեցեք ներքին հիմքի կենտրոնի հեռավորությունը այդ ուղիղից, յեթե նրա հեռավորությունը շոշափման կետից հավասար ե a -ի և հիմքի շառավղը հավասար ե R -ի:

հիմքի հարթության հետ կազմում ե α անկյունը: Այդ բուրգին ներգծված ե մի հավասարակողմ գլան այնպես, վոր նրա հիմքը գտնվում ե բուրգի հիմքի հարթության վրա: Վորոշեցեք գլանի բարձրությունը (գծ. 34):

Կոն

5. Կոնի հիմքի շառավղը կազմար ե R -ի, իսկ ծնիչը թեքված ե դեպի հիմքի հարթությունը α անկյան տակ: Այդ կոնի մեջ, նրա գագաթից տարված ե մի հարթություն, վորը բուրգի բարձրության հետ կազմում ե φ անկյունը: Վորոշեցեք ստացված հատվածի մակերեսը:

6. Կոնի գագաթը գտնվում ե զուգահեռ հարթություններից մեկի վրա, իսկ հիմքը՝ մյուսի վրա: Կոնի առանցքի և ծնիչի միջև կազմված անկյունը հավասար ե α -ի: Առանցքի միջոցով անց ե կացված մի ուղիղ, վորը այդ առանցքի հետ կազմում ե β անկյունը և կոնի կողմնային մակերևույթը հատում ե յերկու կետում: Այդ ուղիղի այն հատվածը, վորը գտնվում ե զուգահեռ հարթությունների միջև, հավասար ե a -ի: Վորոշեցեք այդ ուղիղի կոնի մեջ գտնվող հատվածը:


7. Կոնի ծնիչը հավասար ե l -ի և թեքված ե դեպի հիմքի հարթությունը α անկյան տակ: Վորոշեցեք այդ կոնին ներգծած խորանարդի կողմը:

8. Կոնի մեջ տված են հիմքի շառավղը (R) և ծնիչի ու հիմքի հարթության միջև կազմված α անկյունը: Այդ կոնին ներգծված ե մի մի հավասարակող ուղիղ յեռանյուն պրիզմա, վորի հիմքը գտնվում ե կոնի հիմքի հարթության վրա: Վորոշեցեք այդ պրիզմայի կողի յերկարությունը:

9. Կոնի a ծնիչը թեքված ե դեպի հիմքի հարթությունը α անկյան տակ: Վորոշեցեք կոնի լրիվ մակերևույթը:

10. Կոնի կողմնային մակերևույթը յերեք անգամ մեծ ե հիմքի մակերեսից: Վորոշեցեք ծնիչի և հիմքի միջև կազմված անկյունը:

11. Տրված ե մի կոն, վորի առանցքային հատվածի մակերեսը 4 անգամ փոքր ե լրիվ մակերևույթից: Վորոշեք այդ կոնի ծնիչի և հիմքի հարթության միջև կազմված անկյունը:



Գծ. 35.

12. Վորոշեցեք կոնի լրիվ մակերևույթը, յեթե ծնիչի և հիմքի հարթության միջև կազմված անկյունը հավասար ե α -ի, իսկ առանցքային հատվածի մակերեսը՝ Q -ի:

13. Կոնի իրար հետ φ անկյուն կազմող ծնիչներով անց ե կացրած հարթություն: Այդ հարթությունը թեքված ե դեպի

հիմքը α անկյան տակ: Հատվածի մակերեսը հավասար ե S -ի: Վորոշեցեք կոնի բարձրությունը ($\varphi=52^\circ 16'$; $\alpha=33^\circ 10' 13''$; $S=617,5$ սմ²):


14. Կոնի հիմքի շառավղը հավասար ե r -ի: Ծնիչը թեքված ե դեպի հիմքի հարթությունը α անկյան տակ: Վորոշեցեք կոնի կողմնային մակե-

ընդհանուր և այն հատվածքի մակերեսը, վորն անցնում է կոնի գագաթով և բարձրության հետ կազմում է δ անկյուն ($r=2.3$ մ; $\alpha=42^\circ 27'$; $\delta=6^\circ 21' 18''$)

15. Հողային լիքը ունի 35-րդ գծագրի վրա տրված ձևը:

Տված է՝ $\frac{h}{b} = \frac{1}{n} = 0.05$; $\frac{h}{r} = \frac{1}{m} = \frac{2}{3}$; $h=4$ մ: Հաշվեցեք. 1) α և φ անկյունները, 2) γ անկյունը, 3) b ; 4) r ; 5) պլանի մակերեսը; 6) լիքի մակերեսը:

16. $1:n = \frac{1}{20}$ վերելք ունեցող յերկաթուղին ունի $d=2$ մ լայնությունը ուղղանկյան ձև: Փակուղի կառուցելու համար, անհրաժեշտ է նրա վերջն ամրացնել լիքով, համաձայն 36-րդ գծագրի, վորի վրա տված են լայնական և յերկայնական կտրվածքները և ամրացման պլանը: Բոլոր թվական տվյալները 15-րդ խնդրին են: Ինչպիսիք են տարբերվում այս լիքի մակերեսը 15-րդ խնդրի մեջ բերված լիքի մակերեսից: Վորոշեցեք լիքի ամբողջ մակերեսը:



Գծ. 36.

17. Կոնի կողմնային մակերեսը հավասար է S -ի, իսկ ծնիչը հավասար է a -ի: Գտեք առանցքային հատվածքի գագաթի անկյունը ($S=81.31$ մ²; $a=10$ մ):

18. Կոնի բարձրությունը հավասար է H -ի, իսկ ծնիչը թեքված է դեպի հիմքի հարթությունը α անկյան տակ: Այդ կոնի լրիվ մակերեսը կիսված է նրա բարձրության ուղղահայաց հարթության միջոցով: Վորոշեցեք հատող հարթության հեռավորությունը կոնի գագաթից:

19. Կոնի առանցքային հատվածքի գագաթի անկյունը հավասար է α -ի: Վորոշեցեք կոնի կողմնային մակերեսի փոխվածքի կենտրոնական անկյունը: (Որինակներ. 1) հավասարակողմ կոն; 2) $\alpha=70^\circ 24'$):

20. Հատած կոնի հիմքերից մեկի շառավիղը հավասար է R -ի, իսկ մյուս հիմքինը՝ r -ի: Այդ հատած կոնի ծնիչը թեքված է դեպի R շառավիղ ունեցող հիմքը α անկյան տակ: Վորոշեցեք հատած կոնի կողմնային մակերեսը:

21. Հատած կոնի բարձրությունը հիմքերի շառավիղների միջին համեմատականն է: Հիմքերի շառավիղների գումարը հավասար է S -ի: Հատած կոնի ծնիչի կազմած անկյունը հիմքի հարթության հետ հավասար է α -ի: Վորոշեցեք այդ հատած կոնի կողմնային մակերեսը:

22. Հատած կոնի իրար հետ β անկյուն կազմող յերկու ծնիչներով անց ե կացրած հարթություն, վորը հիմքերի հարթությունները հատում է m -ի և n -ի հավասար լարերով. ($m > n$):

Յուրաքանչյուր լարը ձգում է α աղեղ: Գտեք հատած կոնի կողմնային մակերեսը:

23. Հատած կոնի հիմքերի շառավիղներն են R և r : Այդ կոնի մեջ տարված է մի հարթություն, վորը հիմքի հարթության հետ կազմում է β անկյուն: Այդ հարթությունը յուրաքանչյուր հիմքի շրջանագծից հատում է δ աղեղը: Վորոշեցեք հատվածքի մակերեսը:

24. Հատած կոնի բարձրությունը հավասար է h -ի: Ծնիչը ներքևի հիմքի հարթության հետ կազմում է α անկյուն և ուղղահայաց է այդ ծնիչի վերին ծայրը հանդիպակաց ծնիչի ներքևի ծայրի հետ միացնող գծին: Վորոշեցեք հատած կոնի կողմնային մակերեսը:

25. Հատած կոնի ներքևի և վերևի հիմքերի մակերեսներն ու կողմնային մակերեսը հարաբերում են այնպես, ինչպես $m:n:p$: Վորոշեցեք ծնիչի կազմած անկյունը ներքևի հիմքի հետ:

26. Հատած կոնի մեջ առանցքային հատվածքի անկյունագծերը փոխ ուղղահայաց են, իսկ ծնիչը ներքևի հիմքի հարթության հետ կազմում է α անկյուն և հավասար է l -ի: Վորոշեցեք այդ հատած կոնի կողմնային և լրիվ մակերեսները ($l=12$; $\alpha=70^\circ 20'$):

27. Հատած կոնի ծնիչը հիմքի հարթության հետ կազմում է α անկյունը: Հիմքերի մակերեսներն են Q և q : Վորոշեցեք կողմնային մակերեսը ($S_{կողմ}$):

§ 21. ԾԱՎԱԼՆԵՐԻ ՀԱՇՎՈՒՄԸ

Ձուգահեռանիստ


1. Ուղղանկյուն զուգահեռանիստի անկյունագիծը (1) թեքված է դեպի հիմքի հարթությունը φ անկյան տակ: Հիմքի անկյունագծերի միջև կազմած սուր անկյունը հավասար է β ի: Վորոշեցեք այդ զուգահեռանիստի ծավալը:

2. Ուղղանկյուն զուգահեռանիստի մեջ հիմքի անկյունագիծը հավասար է $d=7.5$ դմ, հիմքի անկյունագծերով կազմված անկյունը՝ $\alpha=43^\circ 27'$, հիմքի մեծ կողմով անցկացրած անկյունագծային հարթության և հիմքի հարթության միջև կազմված անկյունը՝ $\beta=57^\circ 33'$: Վորոշեցեք զուգահեռանիստի ծավալը:

3. Ուղիղ զուգահեռանիստի հիմքի սուր անկյունը հավասար է α -ի, իսկ կողմերը՝ a և b : Ձուգահեռանիստի փոքր անկյունագիծը հավասար է հիմքի մեծ անկյունագծին: Վորոշեցեք այդ զուգահեռանիստի ծավալը:

4. Ուղիղ զուգահեռանիստի հիմքի անկյունագիծը՝ $AC=d$, կողմը՝ $CB=\frac{1}{4} AC$ և $\angle ABC=\alpha$ (գծ. 37):

Ձուգահեռանիստի FC անկյունագիծը հիմքի հարթության հետ կազմում է φ անկյունը: Գտեք զուգահեռանիստի ծավալը և AC , EH անկյունագծերի կազմած անկյունը ($d=14.278$ դմ; $\alpha=106^\circ 6' 7''$; $\varphi=57^\circ 46' 51''$):



Գծ. 37.


5. Չուգահեռանիստի մեջ մի գագաթից յեւնող կողերն են՝ a , b և c և b կողերը փոխողահայաց են, իսկ c կողը ղրանցից յուրաքանչյուրի հետ կազմում է α անկյուն: Վորոշեցեք զուգահեռանիստի ծավալը և c կողի ու ուղղանկյան մակերեսի միջև կազմած անկյունը ($\alpha=120^\circ$):

Պրիզմա

6. Կանոնավոր քառանկյուն պրիզմայի անկյունագիծը կողմնային նիստի հետ կազմում է α անկյուն: Հիմքի կողմը հավասար է a -ի: Վորոշեցեք պրիզմայի ծավալը:

7. Կանոնավոր քառանկյուն պրիզմայի ներքևի հիմքի անկյունագծով ու վերևի հիմքի գագաթով անց ե կացրած հարթություն, վորը պրիզմայի յերկու հարևան նիստերը հատում է ալիսի ուղիղներով, վորոնք կազմում են $\alpha=58^\circ 48' 36''$ անկյուն: Պրիզմայի հիմքի կողմը հավասար է $a=6,4$ սմ: Վորոշեցեք պրիզմայի ծավալը:

8. Կանոնավոր յեռանկյուն պրիզմայի մեջ վերին հիմքի յերկու գագաթները միացված են ներքևի հիմքի ղրանց հանդիպակաց կողերի միջնակետերին: Ստացված գծերով կազմված ալն անկյունը, վոր իր բացվածքով ուղղված է դեպի հիմքը, հավասար է α -ի: Հիմքի կողմը հավասար է a -ի: Վորոշեցեք ալք պրիզմայի ծավալը:



Գծ. 38.

վրա չափերը արտահայտված են մետրերով:

10. Ուղիղ պրիզմայի հիմքը ABC յեռանկյունն է, վորի մեջ՝ $AC=38,03$ դմ, $BC=34,84$ դմ, $\angle ACB=58^\circ 22'$: Պրիզմայի կողմնային կողը հավասար է ABC յեռանկյան h բարձրությանը: Վորոշեցեք 1) լրիվ մակերևույթը ($S_{լրիվ}$); 2) պրիզմայի ծավալը:

11. Ուղիղ պրիզմայի h բարձրությունը հավասար է 20 դմ-ի: Այդ պրիզմայի հիմքը $\alpha=45^\circ 42'$ սուր անկյունն ունեցող ուղղանկյուն սեղան է, վորն արտագծված է $r=6,15$ դմ շառավիղն ունեցող շրջանին: Վորոշեցեք պրիզմայի ծավալը:

12. Յերկաթուղու համար պահանջվում է կատարել փորվածք $\varphi=18^\circ 30,5'$ թեքութուն ունեցող հողամասում (գծ. 39): Փորվածքի կողքի շեպի (откос) անկյունը՝ $\alpha=28^\circ 10'$, փորվածքի լայնությունը ներքևում հավասար է $b=14,2$ մ, խորությունը մեջտեղում հավասար է $h=9,2$ մ: Քանի խորանարդ մետր հող ղուրս կգա փորվածքի յուրաքանչյուր մետրից (ըստ յերկարության):



Գծ. 39.

13. Պրիզմայի հիմքը ABC յեռանկյունն է, վորի մեջ $BC=a$ և $AB=AC$:

AA_1 կողը հավասար է b -ի և ուղղահայաց է BC -ին: AA_1 կողի մոտ գտնվող յերկնիստ անկյունը հավասար է α -ի: Վորոշեցեք այդ պրիզմայի ծավալը:

Բուրգի

14. Վորոշեցեք կանոնավոր n անկյուն բուրգի ծավալը, յեթե ալք բուրգի կողմնային կողը հավասար է b -ի և թեքված է դեպի հիմքը β անկյան տակ, ($n=8$; $b=3,5$ մ; $\beta=78^\circ 39'$):

15. Վորոշեցեք կանոնավոր քառանկյուն բուրգի ծավալը, յեթե ալք բուրգի կողմնային կողը հավասար է b -ի, իսկ գագաթի հարթ անկյունը՝ α :

16. Վորոշեցեք բուրգի ծավալը, յեթե բարձրությունը հավասար է h -ի, կողմնային կողերը թեքված են դեպի հիմքը φ անկյան տակ և հիմքը α և β անկյուններն ունեցող յեռանկյունն է:

17. Յեռանկյուն բուրգի մեջ յերկու կողմնային նիստերը հավասարա-սրուն ուղղանկյուն յեռանկյուններ են, վորոնց ներքնաձիգերը հավասար են b -ի և իրար հետ կազմում են α անկյուն: Վորոշեցեք ալք բուրգի ծավալը:

18. Բուրգի հիմքը մի սեղան է, վորի յուրաքանչյուր կողմնային կողը և հիմքերից փոքրը հավասար են a -ի, իսկ սուր անկյունները՝ α -ի: Բուրգի կողմնային կողերը հիմքի հետ կազմում են φ անկյուն: Վորոշեցեք ալք բուրգի ծավալը:

19. Բուրգի հիմքը հավասարասրուն մի սեղան է, վորի մեջ հիմքերը հավասար են a և b ($a > b$), իսկ անկյունագծերի անհավասար հատվածների միջև կազմված անկյունը հավասար է α -ի: Բուրգի բարձրությունն անցնում է հիմքի անկյունագծերի հատման կետով: Հիմքի ղուգահեռ կողմերի մոտ գտնվող յերկնիստ անկյունները հարաբերում են ալնպես $1:2$: Վորոշեցեք բուրգի ծավալը:

20. $SABCD$ բուրգի հիմքը $ABCD$ ղուգահեռալկողն է: SB և SD կողերը ուղղահայաց են հիմքի BC և AD կողմերին և կազմում են հիմքի հարթության հետ φ անկյուն: Վորոշեցեք բուրգի ծավալը, յեթե ղուգահեռալկողի սուր անկյունը հավասար է α -ի, իսկ մակերեսը P -ի:

21. $SABC$ բուրգի ABC նիստի մեջ A անկյունը հավասար է $72^\circ 36' 45''$ և B անկյունը հավասար է $47^\circ 23' 15''$: Բուրգի ծավալը հավասար է $317,058$ խորանարդ սանտիմետրի, SC կողով և ABC յեռանկյան C անկյան կիսողով հարթության: Այդ հարթությունը ինչպիսի մասերի յե բաժանում տված ծավալը:

22. Կանոնավոր տիտրաեդրի կողով անց ե կացրած հարթություն, վորն ալք տետրաեդրի ծավալը բաժանում է $3:5$ հարաբերությամբ: Ինչպիսի մասերի յե բաժանվում յերկնիստ անկյունը:

Հասած բուրգի

23. Հորն ունի կանոնավոր հատած քառանկյուն բուրգի ձև: Հիմքերի կողմերը հավասար են 14 մ և 10 մ: Կողմնային նիստերը հիմքի հետ կազմում են 38° անկյուն: Ինչքան ջուր կտանի այդ հորը:

24. Հատած կանոնավոր քառանկյուն բուրգի մեջ տրված են մեծ և փոքր հիմքերի կողմերը՝ a և b , և կողմնային նիստի α սուր անկյունը: Վորոշեցեք ալք հատած բուրգի ծավալը ($a=25,704$; $b=15,23$; $\alpha=65^\circ 12'$):

25. Կանոնավոր ութանկյուն հատած բուրգի հիմքերի կողմերը հավասար են 90 սմ և 30 սմ, կողմնային կողը հավասար է 2 մ: Գտեք ծավալը:

26. Կանոնավոր Ու-անկյուն հատած բուրգի հիմքերի կողմերը հավասար են a և b : Կողմնային կողը հիմքի հարթության հետ կազմում է α անկյուն: Գտեք ծավալը:


27. Վորոշեցեք կանոնավոր Ու-անկյուն հատած բուրգի ծավալը (V) և լրիվ մակերևույթը ($S_{\text{լրիվ}}$), յեթե կողմնային կողը հավասար է 1-ի, իսկ հիմքերի կողմերը՝ a և b :

28. Վորոշեցեք կանոնավոր քառանկյուն բուրգի ծավալը, յեթե հայտնի լինի, վոր հիմքի կողմը հավասար է a -ի և կողմնային նիստերի միջև կազմված յերկնիստ անկյունը՝ α -ի:

29. Գլանի կողմնային մակերևույթը փռվածքի մեջ պատկերացված է մի ուղղանկյունով, վորի մեջ d անկյունագիծը հիմքի հետ կազմում է α անկյուն: Վորոշեցեք գլանի ծավալը:

30. Գլանի հիմքի շրջանի մեջ անց է կացրած a յերկարությամբ մի լար: Այդ լարի համապատասխան կենտրոնական անկյունը հավասար է α -ի: Գլանի բարձրությունը h է: Գտեք այդ գլանի ծավալը ($a=4,8$ դմ; $\alpha=26^\circ 32' 46''$; $h=23$ դմ):

31. Հավասարակողմ գլանի (այսինքն մի գլանի, վորի հիմքի տրամագիծը հավասար է ծնիչին) հիմքին ներգծած է կանոնավոր Ու-անկյուն, վորի կողմը հավասար է a -ի: Վորոշեցեք. 1) այդ գլանի կողմնային մակերևույթը և 2) ծավալը:



Գծ. 40.

Եթե այդ խողովակի արտաքին մակերևույթի ծնիչով անցկացնենք ներքին մակերևույթը շոշափող յերկու հարթություն, այդ հարթությունների միջև կազմված անկյունը, հավասար կլինի α -ի, իսկ այդ հարթությունների և խողովակի հիմքի ներքին շրջանագծի շոշափման կետերը միացնող լարը հավասար է b -ի:

34. Գլանի հիմքի մեջ անց է կացրած այդ հիմքին ներգծած կանոնավոր Ու-անկյան կողմին հավասար մի լար: Յեթե այդ լարի ծայրերը միացնենք մյուս հիմքի կենտրոնին, ապա ստացված յեռանկյան մակերեսը հավասար կլինի Q ի, իսկ գագաթի անկյունը՝ α ի: Վորոշեցեք տվյալ գլանի կողմնային մակերևույթը (S) և ծավալը (V):

32. Հորիզոնական վիճակում հաստատված գլանային գուռը (бак) լցված է հեղուկով (գծ. 40): AB աղեղը պարունակում է 135° : Գուռի տրամագիծը (ներքին) հավասար է 1,7 մ: Գուռի յերկարությունը (ներքին) հավասար է 3,5 մ: Վորոշեցեք հեղուկի քանակը:

33. Վորոշեցեք H բարձրությունն ունեցող գլանաձև խողովակի ծավալը, գիտենալով, վոր

$l = 6$

35. Մանր ավաղի շիպի անկյունը հավասար է $\varphi=31^\circ$: Ավաղի կույտը կոնի տեսք ունի, Հիմքի շրջանագծի յերկարությունը հավասար է 11 մ: Ավաղի տեսակարար կշիռը 1,6 է: Վորոշեցեք ավաղի այդ կույտի քաշը:

36. Կոնի ծնիչի և առանցքի միջև կազմված անկյունը հավասար է $\alpha=18^\circ 45' 50''$, ծնիչի յերկարությունը՝ $l=36,17$ դմ: Վորոշեցեք կոնի լրիվ մակերևույթն (S) ու ծավալը (V):

37. Կոնի ծնիչը հիմքի հարթության հետ կազմում է α անկյուն, իսկ բարձրությունը հավասար է h -ի: Վորոշեցեք 1) լրիվ մակերևույթը և 2) ծավալը:

38. Կոնի ծնիչը հիմքի հարթության հետ կազմում է α անկյուն: Հիմքի շառավիղը հավասար է R ի: Վորոշեցեք կոնի լրիվ մակերևույթն ու ծավալը:

39. Կոնի առանցքային հատվածքը մի յեռանկյուն է, վորի գագաթի անկյունը հավասար է α : Այդ յեռանկյան արտագծած շրջանի շառավիղը հավասար է R -ի: Վորոշեցեք կոնի ծավալը:

40. Կոնի հիմքի մեջ a լարը ձգում է α աղեղը. կոնի ծնիչի և բարձրության միջև կազմված անկյունը հավասար է β -ի: Վորոշեցեք կոնի ծավալը:

41. Կոնի ծնիչի և բարձրության յերկարությունների տարբերությունը հավասար է $d=2,5$ դմ, իսկ զրանցով կազմված անկյունը՝ $\alpha=42^\circ 38' 16''$: Վորոշեցեք կոնի ծավալը:

42. $R=5,38$ դմ շառավիղն ունեցող շրջանագիծը ծառայում է վորպես ընդհանուր հիմք յերկու կոների, վորոնք կառուցված են ընդհանուր հիմքի մի կողմում: Կոներից մեկի ծնիչը հիմքի հարթության հետ կազմում է $\alpha=74^\circ 28'$ անկյուն, իսկ մյուս կոնի ծնիչը նույն հարթության հետ կազմում է $\beta=60^\circ 12'$ անկյուն: Վորոշեցեք այդ կոների կողմնային մակերևույթներով սահմանագծված ծավալը:


Հատած կոն

43. Հատած կոնի ծնիչը R շառավիղն ունեցող հիմքի հետ կազմում է α անկյուն: Մյուս հիմքի շառավիղը հավասար է r -ի: Գտեք հատած կոնի ծավալը:

44. Հատած կոնի հիմքերի հարաբերությունը հավասար է 4-ի, ծնիչը հավասար է 1 ի և հիմքի հարթության հետ կազմում է անկյուն: Վորոշեցեք հատած կոնի ծավալը:

45. 41-րդ գծագրի վրա պատկերացված է գոմնային վառարանի յերկայնական կտրվածքը: Դոմնային վառարանի ներքին մասը կազմված է յերկու հատած կոնից: Վերևի և ներքին անցքերի շառավիղները հավասար են r_1 և r_2 : Ծնիչները ընդհանուր հիմքի հետ կազմում են α և β անկյուններ: Ամբողջ ծավալը հավասար է V -ի: Վորոշեցեք կոների ընդհանուր հիմքի r շառավիղը և այդ կոների h ու h_1 բարձրությունները ($2r_1=4,2$ մ; $2r_2=4,9$ մ; $\alpha=76^\circ$; $V=572,6$ մ³):

46. Հատած կոնի մեջ տեղավորվում է մի կոն,



Գծ. 41.

վորի հիմքը հատած կոնի փոքր հիմքն է, բարձրությունը՝ հատած կոնի բարձրությունն է և ծնիչները համապատասխանաբար զուգահեռ են հատած կոնի ծնիչներին: Վորոշեցեք հատած կոնի ծավալը, լեթե հայտնի յե, վոր այդ հատած կոնի ծնիչների շարունակությունների միջև կազմված անկյունը հավասար է $\alpha = 65^\circ 49' 48''$ և ծնիչներից յուրաքանչյուրը հավասար է $a = 24,9$ դմ:

47. Հատած կոնի մեջ առանցքային հատվածքի անկյունագծերը փոխադարձ ուղղահայաց են, իսկ ծնիչը մեծ հիմքի հարթության հետ կազմում է α անկյուն և հավասար է 1-ի: Վորոշեցեք այդ հատած կոնի ծավալը ($l=12$; $\alpha=70^\circ 20'$):


§ 22. ԳՈՒՆԻ ՅԵՎ ՆՐԱ ՄԱՍԵՐԸ

ԳՈՒՆԻ

1. Յերկրագնդի շառավիղը հավասար է 6370 կմ: Մոսկվան գտնվում է հյուսիսային լայնության 56° -ի վրա: Վորոշեցեք այդ լայնության շրջանի շառավիղը:

2. Յերկրագնդի շառավիղը հավասար է 6370 կմ: Վորոշեցեք արևագարձի ($23^\circ 27'$ լայնություն) և բևեռային շրջանագծի ($66^\circ 33'$ լայնություն) լերկարությունը:

3. Սարի գագաթին A կետում գտնվող դիտողը Հավան տեսողության դեպի հորիզոն ուղղված AC ճառագայթի և AD ուղղաձիգ գծի միջև կազմված $\angle DAC = x$ անկյունը (գծ. 42): Գիտենալով լերկարագնդի շառավիղը (R), վորոշեցեք սարի բարձրությունը ($AD=x$):



Գժ. 42.

4. $V=53,377$ դմ³ ծավալ ունեցող գնդին ներգծած է մի կոն: Կոնի հիմքի տրամագծի մեկի ծայրերից անց կացրած ծնիչներով կազմած անկյունը հավասար է $\alpha = 42^\circ 18'$: Վորոշեցեք կոնի ծավալը:

5. Կոնի ծնիչը առանցքի հետ կազմում է $\alpha = 35^\circ 18' 20''$ անկյուն: Վորոշեցեք կոնի ծավալի հարաբերությունը այդ կոնին արտագծած գնդի ծավալին:

6. Կանոնավոր n-անկյուն բուրգի հիմքի կողմը հավասար է a-ի, հիմքի լերկնիստ անկյունը հավասար է φ : Վորոշեցեք այդ բուրգին ներգծած գնդի շառավիղը:

7. Վորոշեցեք կանոնավոր n-անկյուն բուրգին արտագծած գնդի շառավիղը, յեթե հիմքի կողմը հավասար է a-ի, իսկ կողմնային կողը հիմքի հարթության հետ կազմում է α անկյուն ($n=8$; $a=3,5$ մ $\alpha=58^\circ 37' 42''$):

8. Բուրգի հիմքը մի ուղիղ է, վորի կողմը a չե, իսկ սուր անկյունը α : Հիմքի լերկնիստ անկյունը հավասար է φ : Վորոշեցեք այդ բուրգին ներգծած գնդի շառավիղը:

9. Կոնի մեջ տրված են հիմքի շրջանագծի C լերկարությունը և ծնիչի ու հիմքի հարթության միջև կազմված α անկյունը: Վորոշեցեք կոնի կողմնային մակերևույթը և այդ կոնին ներգծած գնդի մակերևույթի փոխշոշափման գծի լերկարությունը:

10. Կոնական մակերևույթին ներգծած է գունդ: շոշափման գիծը այդ գնդի մակերևույթը բաժանում է m:n հարաբերությամբ: Վորոշեցեք կոնական մակերևույթի ծնիչի թեքությունը դեպի առանցքը ($m:n = \frac{1}{3}$):

11. Վորոշեցեք կոնի ծնիչի և հիմքի հարթության միջև կազմված անկյունը, յեթե հիմքի մակերեսը, ներգծած գնդի մակերևույթը և կոնի կողմնային մակերևույթը կազմում են թվաբանական պրոգրեսիա:

12. Կոնը m անգամ մեծ է այդ կոնին ներգծած գնդից: Վորոշեցեք այդ կոնի ծնիչի և հիմքի հարթության միջև կազմված անկյունը:

(Գտեք m-ի ամենափոքր արժեքը, հաշվեցեք անկյունը, յեթե $m=2\frac{1}{4}$):

13. Կոնի ծավալը կիսող լայնական հատվածքը անցնում է արտագծած գնդի կենտրոնով: Վորոշեցեք ծնիչի և հիմքի հարթության միջև կազմված անկյունը:

14. Վորոշեցեք կոնի առանցքային հատվածքի գագաթի անկյունը, յեթե այդ կոնը արտագծած է չորս հավասար գնդերի աչյակես, վոր դրանցից յուրաքանչյուրը շոշափում է մնացած չերեքին:

15. Գնդին արտագծած հատած կոնի կողմնային մակերևույթը հարաբերում է գնդի կողմնային մակերևույթին աչյակես, ինչպես m:n: Վորոշեցեք ծնիչի և մեծ հիմքի միջև կազմված անկյունը ($\frac{m}{n} = \frac{2}{1}$):

16. Հատած կոնի հիմքերի շառավիղները հավասար են R և r, իսկ ծնիչը թեքված է դեպի ներքին հիմքի հարթությունը α անկյան տակ: Վորոշեցեք այդ հատած կոնին արտագծած գնդի շառավիղը:

17. Հատած կոնի հիմքերի շառավիղներն են r_1 և r_2 ($r_1 > r_2$): Այդ հատած կոնին ներգծած է գունդ: Վորոշեցեք 1) գնդի մակերևույթը և 2) կոնի ծնիչի ու հիմքի հարաբերության միջև կազմված անկյունը:


18. Կոնի մեջ տեղավորված են չերկու գնդեր աչյակես, վոր դրանք շոշափում են թե մեկը մյուսին և թե կոնի մակերևույթին (գծ. 43): Գնդերի OM և EN շառավիղների հարաբերությունը հավասար է $\frac{m}{n}$: Վորոշեցեք կոնի առանցքով տարած հատվածքի գագաթի ABC անկյունը:

19. Կոնի հիմքի շառավիղը հավասար է K-ի, իսկ ծնիչի և հիմքի հարթության միջև կազմված անկյունը α -ի: Այդ կոնին ներգծված են մի շարք գնդեր աչյակես, վոր առաջին գունդը շոշափում է բուրգի հիմքն ու կողմնային մակերևույթը, իսկ հաջորդ յուրաքանչյուր գունդը շոշափում է բուրգի կողմնային մակերևույթն ու նախորդ գունդը: Գտեք այն սահմանը, վորին ձգտում է այդ գնդերի ծավալների գումարը, յեթե գնդերի թիվն անվերջ մեծացնենք:

ԳՆԴԻ ՄԱՍԵՐԸ


20. Գունդն ունի գնդի ձև: Այդ գունդը մինչև և բարձրությունը լցված է մի հեղուկով: Վորի տեսակաբար կշիռը հավասար է d-ի: AB աղեղը (գծ. 44) պարունակում է φ : Գունդի շառավիղը (ներքին) հավասար է R ի: Վորոշեցեք հեղուկի կշիռը:

21. Կազամբարը կազմված է մի գլանից, վորը վերևից ծածկված է



Գժ. 43.

գնդային սեգմենտով: Գլանի ներքին չափերն են՝ տրամագիծը—24 մ, բարձրությունը—6 մ: Գլանը ծածկող գնդային սեգմենտի առանցքային հատվածքում ստացված աղեղը պարունակում է $73^{\circ}44'$: Գտեք գազամբարի տարողությունը:



Գծ. 44.

22. Հաժաար հիմքեր ունեցող մի գնդային շերտի կողմնային մակերևույթը հավասարամեծ է հիմքերի գումարին: Վորոշեցեք այդ շերտի առանցքային հատվածքի վրա ստացված աղեղի խրկարությունը:

23. Վորոշեցեք գնդային սեգմենտի, կոր մակերևույթը, յեթե այդ սեգմենտի առանցքային հատվածքի աղեղը հավասար է α -ի, իսկ լարի խրկարությունը՝ α -ի:

24. Գնդային սեգմենտի առանցքային հատվածքի աղեղը հավասար $\alpha = 65^{\circ}28'36''$: Այն գնդի շառավիղը, վորից

անջատված է տված սեգմենտը, հավասար է $R=24$ դմ: Վորոշեցեք սեգմենտի կոր մակերևույթը:

25. Գնդային սեկտորի առանցքային հատվածքի սեգմենտի աղեղը հավասար է α -ի և այդ աղեղին ձգող լարը՝ b : Վորոշեցեք սեկտորի ծավալը:

26. Գնդի ծավալը հավասար է V -ի: Վորոշեցեք գնդի այն սեկտորի ծավալը, վորի առանցքային հատվածքի կենտրոնական անկյունը հավասար է α -ի:

27. Գնդական սեկտորի գազաթի անկյունը հավասար է α -ի, իսկ շառավիղը՝ R է: Վորոշեցեք այդ սեկտորի լրիվ մակերևույթը:

28. Շրջանային OAB սեկտորի պտտումից (OA շառավիղի շուրջը) առաջացած մարմնի ծավալը հավասար է նույն շառավիղն ունեցող գնդի ծավալի $\frac{1}{4}$ մասին: Վորոշեցեք OA և OB շառավիղների միջև կազմված անկյանը:

29. Շրջանային սեկտորը, վորի շառավիղը հավասար է R -ի, իսկ կենտրոնական անկյունը α , պտտվում է այդ սեկտորի միջին շառավիղին ուղղահայաց տրամագծի շուրջը: Վորոշեցեք պտտման մարմնի ծավալը:

30. Շրջանային սեկտորի աղեղը հավասար է α -ի (180° -ից փոքր): Սեկտորը պտտվում է այդ սեկտորից դուրս գտնվող տրամագծի շուրջը: Ստացված մարմնի ծավալը հարաբերում է նույն շառավիղն ունեցող գնդի ծավալին այնպես, ինչպես $\frac{m}{n}$: Վորոշեցեք այն անկյուններից փոքրը, վոր

տրամագիծը կազմում է սեկտորի կողմնային շառավիղների հետ ($\alpha=90^{\circ}$;

$$\frac{m}{n} = \frac{\sqrt{3}}{\sqrt{8}}):$$

31. Գնդային սեկտորի շառավիղը հավասար է R -ի, շառավիղներով կազմված ամենամեծ անկյունը հավասար է α է: Վորոշեցեք այդ սեկտորին ներգծած գնդի ծավալն ու մակերևույթը:

§ 23. ՊՏՏՐԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

«Բաժան մարմիններ, վորո՞ւմ վերածվում են գլանի յեվ կոնի»

1. Յեռանկյան կողմերից մեկը՝ $c=6$ մ, իսկ այդ կողմի մոտ գտնված անկյունները՝ $\alpha=97^{\circ}12'20''$ և $\beta=13^{\circ}18'$: Այդ յեռանկյունը պտտվում է c կողմի շուրջը: Վորոշեցեք այդ պտտումից առաջացած մարմնի ծավալն ու մակերևույթը:

2. Հավասարասրուն յեռանկյան մակերեսը հավասար է $S=50$ դմ², իսկ գագաթի անկյունը՝ $\beta=100^{\circ}26'24''$: Հաշվեցեք այն մարմնի լրիվ մակերևույթը, վոր առաջանում է այդ յեռանկյան պտտումից, հիմքի ծայրերից մեկով անցկացրած հիմքին ուղղահայաց ուղիղի շուրջը:

3. Վորոշեցեք այն մարմնի ծավալը, վորը առաջանում է ABC յեռանկյան պտտումից մի ուղիղի շուրջ, վորն անցնում է A գագաթով և զուգահեռ է BC կողմին, գիտենալով, վոր $BC=a=23,543$ դմ, AB կողմի պրոնկցիան պտտման առանցքի վրա հավասար է $b=7,3345$ դմ, իսկ AB -ի և b -ի միջև կազմված անկյունը հավասար է $\alpha=18^{\circ}36'47''$:

4. Կանոնավոր յեռանկյունը, վորի կողմը հավասար է a -ի, պտտվում է մի առանցքի շուրջ, վորը գտնվում է այդ յեռանկյունուց դուրս և անցնում է նրա կողմերից մեկի ծայրով, կազմելով վերջինի հետ α անկյուն: Վորոշեցեք պտտումից առաջացած մարմնի մակերևույթը:

5. Հավասարասրուն յեռանկյունը, վորի սրունքը հավասար է b -ի, իսկ գագաթի անկյունը α -ի, պտտվում է սրունքներից մեկի շուրջ: Վորոշեցեք պտտումից առաջացած մարմնի ծավալն ու մակերևույթը ($\alpha=120^{\circ}$):

6. Ռոմբը, վորի կողմը a չէ, իսկ սուր անկյունը՝ α , պտտվում է մի առանցքի շուրջ, վորն անցնում է սուր անկյան գագաթով և ուղղահայաց է կողմին: Վորոշեցեք պտտումից առաջացած մարմնի ծավալն ու մակերևույթը:

7. Յեռանկյան մեջ տրված են a կողմն ու B և C անկյունները: Վորոշեցեք այն մարմնի ծավալն ու մակերևույթը, վորը կստացվի յեռանկյունը տված կողմի շուրջը պտտեցնելուց:

8. Յեռանկյան մեջ տված են b և c կողմերն ու դրանցով կազմած α անկյունը: Այդ յեռանկյունը պտտվում է մի առանցքի շուրջ, վորը գտնվում է յեռանկյունուց դուրս և անցնում է α անկյան գագաթից: Այդ առանցքը հավասարապես է թեքված դեպի b և c կողմերը: Վորոշեցեք պտտումից առաջացած մարմնի ծավալը:

9. Յեռանկյան մեջ տված են a հիմքն ու նրան կից անկյունները՝ α և $90^{\circ}+\alpha$: Վորոշեցեք այդ յեռանկյունը իր բարձրությամբ շուրջը պտտելուց առաջացած մարմնի ծավալը:

10. R խրկարության շառավիղ ունեցող կիսաշրջանագծի մեջ AB տրամագծի B ծայրից վեցրած են BC աղեղը, վորը հավասար է α -ի (փոքր 90° -ից), և C կետից անց է կացրած շոշափող մինչև AB տրամագծի հետ հատվելը D կետում: Բացի այդ, C կետը միացրած է A կետի հետ: Վորոշեցեք ACD յեռանկյունը AD կողմի շուրջը պտտելուց առաջացած մարմնի ծավալը:

11. Տրված են ABC յեռանկյան անկյունները: Վորոշեցեք, թե ինչպես


են հարաբերում ∇_a , ∇_b և ∇_c ծավալները, վորոնք ստացվում են այդ լեռանկյունը հաջորդաբար a , b և c կողմերի շուրջը պտտելուց:

12. Բթանկյուն լեռանկյան մեջ տրված են մեծ կողմը (b) և այդ կողմի մոտ գտնվող α և γ անկյունները: Այդ լեռանկյունը պտտվում է մի առանցքի շուրջը, վորն անցնում է արտագծած շրջանի կենտրոնով և զուգահեռ է b կողմին: Վորոշեցեք պտտումից առաջացած մարմնի ծավալը ($b=10$; $\alpha=50^\circ$; $\gamma=23^\circ 17'$):

13. Ուղղանկյուն լեռանկյան մակերեսը հավասար է S -ի: Սուր անկյուններից մեկը հավասար է α -ի: Այդ սուր անկյան դագաթով անց է կացրած մի ուղիղ, վորը ուղղահայաց է ներքնաձիգին և գտնվում է լեռանկյան հարթության մեջ: Վորոշեցեք լեռանկյունն այդ ուղիղի շուրջը պտտելուց առաջացած մարմնի ծավալը (V):

14. Վորոշեցեք այն մարմնի ծավալն ու մակերևույթը, վորն առաջանում է ուղղանկյան պտտումից, նրա մի դագաթից d անկյունագծին տարած ուղղահայաց ուղիղի շուրջը, լեթե անկյունագծի շուրջը կողմի հետ կազմում է α անկյուն ($d=34,06$ մ; $\alpha=56^\circ 14' 18''$):

15. ABCD քառանկյան C դագաթից (գծ. 45) անց է կացրած CX ուղիղը, վորը BC կողմի հետ կազմում է $BCx=60^\circ$ անկյուն և հատում է AD կողմը E կետում: Վորոշեցեք EABC քառանկյունը CX առանցքի շուրջը պտտելուց առաջացած մարմնի ծավալը, լեթե հայտնի լինի, վոր քառակուսու կողմը հավասար է a -ի:



Գծ. 45.

16. Ուղղանկյուն լեռանկյան պարագիծը հավասար է $2p=27,425$ դմ, անկյուններից մեկը՝ $\alpha=41^\circ 15' 32''$: Վորոշեցեք այդ լեռանկյունը իր տրամագծի շուրջը պտտելուց առաջացած մարմնի ծավալը:

17. Ի լեռնաբուծյան շառավիղ ունեցող շրջանին տրամագծած ուղղանկյուն սեղանի սուր անկյունը հավասար է α -ի: Վորոշեցեք այդ սեղանի իր վոշ զուգահեռ կողմերից վորքի շուրջը պտտելուց առաջացած մարմնի կողմնալին մակերևույթը:

18. Յերկու լեռանկյուններ գտնվում են միևնույն հարթության մեջ և ունեն $b=25,345$ սմ ընդհանուր կողմը: Այդ լեռանկյուններից մեկը հավասարակողմ է, իսկ մյուսը՝ հավասարասրուն: Վերջինի դագաթի անկյունը հավասար է $\alpha=54^\circ 17' 36''$: Վորոշեցեք այն մարմնի մակերևույթն ու ծավալը, վորը կառաջանա լեռանկյունների տված սեստեմի պտտումից մի առանցքի շուրջը, վորը անցնում է այդ լեռանկյունների ընդհանուր դագաթներից մեկով և զուգահեռ է հավասարասրուն լեռանկյան բարձրութանը:

19. Չուգահեռակողմի անկյունագծի շուրջը, նույն զուգահեռակողմի վորք կողմի հետ կազմում է β անկյունը: Չուգահեռակողմի մեծ կողմերի հետևավորութունը հավասար է h ի: Վորոշեցեք այն մարմնի ծավալը, վորը կառաջանա զուգահեռակողմի պտտումից մի առանցքի շուրջը, վորն անցնում է այդ զուգահեռակողմի σ սուր անկյան դագաթից և զուգահեռ է վերջինի շրջանագծին:

20. Չույդ թվով (n) կողմ ունեցող կանոնավոր բազմանկյունը պտտվում է այդ բազմանկյան լեռկու հակադիր դագաթները միացնող գծի շուրջը: Պտտման մարմնի մակերևույթն ու ծավալն արտահայտեցեք 1) ներգծած շրջանի r շառավիղով, 2) արտագծած շրջանի R շառավիղով և 3) բազմանկյան a կողմով:

21. Չույդ թվով (n) կողմ ունեցող կանոնավոր բազմանկյունը պտտվում է կողմի միջնակետը հանդիպակաց դագաթի հետ միացնող գծի շուրջը: Պտտման մարմնի ծավալն ու մակերևույթն արտահայտեցեք 1) ներգծած շրջանի r շառավիղով, 2) արտագծած շրջանի R շառավիղով և 3) բազմանկյան a կողմով:

